Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի նիստում,
արձանագրություն N 7,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Գ. Լ. Աթոյան
«17» _____ 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը սահմանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) ամբիոնի վարիչի ընտրության, աշխատանքային պայմանագրի կնքման և պաշտոնում հրամանագրման կարգը:

2. Համալսարանի ամբիոններն ըստ գործունեության բնույթի լինում են՝

1) թողարկող.

2) ոչ թողարկող:

3. Ամբիոնի գործունեությունն իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է վարիչը, ով ընտրվում է համալսարանի գիտական խորհրդում՝ 5 (հինգ) տարի ժամկետով և պաշտոնում հրամանագրվում է համալսարանի ռեկտորի կողմից: Գիտությունների թեկնածու, դոցենտն ամբիոնի վարիչի պաշտոնը կարող է անընդմեջ զբաղեցնել երկու հնգամյա ժամկետից ոչ ավելի:

Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:

4. Ամբիոնի վարիչը չի կարող միաժամանակ երկու պաշտոն զբաղեցնել:

5. Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ռեկտորն իրավունք ունի ամբիոնի վարիչի հետ կնքել մինչև մեկ տարի ժամկետով պայմանագիր:

(5-րդ կետը փոխ. 31.10.2023 N 3-5)

2. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

6. Համալսարանում սահմանվում է ամբիոնի վարիչի ընտրության բաց մրցութային կարգ:

7. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) հայտարարությունը (այսուհետ՝ հայտարարություն) հրապարակվում է մրցույթն անցկացնելուց առնվազն 30 օր առաջ՝ հանրապետական մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև համացանցում՝ համալսարանի պաշտոնական կայքում:

8. Հայտարարության տեքստում պարտադիր ներառվում են հետևյալ տվյալները՝

1) թափուր պաշտոնի անվանումը,

2) տվյալ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին ներկայացվող պահանջները,

3) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի (նյութերի) ցանկը,

4) փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը,

5) մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող համալսարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման հասցեն և հեռախոսահամարը,

6) մրցույթի անցկացման վայրը:

9. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք:

Թեկնածուների բացակայության կամ մրցույթից հետո ամբիոնի վարիչի պաշտոնը թափուր մնալու դեպքում մեկ ամսվա ընթացքում հայտարարվում է նոր մրցույթ:

10. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները պետք է ունենան առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական ստաժ:

11. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում՝

(11-րդ կետը փոխ. 31.10.2023 N 3-5)

1) դիմում ռեկտորին,

2) քաղվածք աշխատանքային գրքույկից,

3) ինքնակենսագրություն,

4) գիտական (որակավորման) աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,

5) տպագրված (հրատարակված) գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը.

6) տվյալներ պարգևատրումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ,

7) ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիր:

12. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդի գործը չի ընդունվում, եթե պահանջվող փաստաթղթերը լրիվ չեն, կամ պահպանված չէ դրանց ներկայացման ժամկետը:

13. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդի դիմումը կարող է ռեկտորի կողմից մերժվել, եթե ներկայացված փաստաթղթերով հավաստված

տեղեկատվությունը չի բավարարում մրցույթի պայմաններին (համապատասխանությունը ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը):

14. Ռեկտորից մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած հավակնորդների գործերը հանձնվում են համապատասխան պրոռեկտորին: Նա ամբիոնի նիստում կազմակերպում է ամբիոնի վարիչի հավակնորդի (հավակնորդների) և ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի նրա (նրանց) ներկայացրած ծրագրի (ծրագրերի) քննարկումը և համալսարանի գիտական քարտուղարին է ներկայացնում ամբիոնի կարծիքը, որտեղ նշվում են հավակնորդների մասնագիտական բնութագրերն ու գիտամանկավարժական գործունեության գնահատականները, ամբիոնի նիստի քվեարկության արդյունք-ները: Ամբիոնի նիստում քվեարկության (փակ գաղտնի կամ բաց՝ ըստ ամբիոնի նիստի որոշման) արդյունքում կայացվում է որոշում ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության վերաբերյալ:

15. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար մեկից ավելի դիմումների դեպքում, ամբիոնի նիստում գործերի քննարկման արդյունքի համաձայն, ամբիոնը հավակնորդներից մեկին կարող է տալ նախապատվություն, որից հետո բոլոր գործերը ներկայացնում է համալսարանի գիտական քարտուղարին:

16. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի թեկնածուի (թեկնածուների) գործը (գործերը) և ամբիոնի նիստի քննարկման և քվեարկության արդյունքները գիտական քարտուղարը նույն օրը ներկայացնում է համալսարանի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ մրցութային հանձնաժողով):

3. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

17. Ամբիոնի վարիչի ընտրության օրակարգով՝ գիտական խորհրդի նիստն իրավազոր է գիտական խորհրդի կազմի առնվազն 2/3-ի ներկայության դեպքում: Գիտական խորհրդի նիստում բոլոր որոշումներն ընդունվում են ներկա անդամների

ձայների պարզ մեծամասնությամբ (կեսից ավելի)՝ բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդը որոշման ընդունման այլ կարգ չի սահմանում:

18. Նախագահողը, ըստ դիմումների տրման ժամկետի, ներկայացնում է թեկնածուների ցուցակը:

19. Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկայացնում է թեկնածուների տվյալները, ամբիոնի և մրցութային հանձնաժողովի կարծիքները:

20. Գիտական խորհրդի նիստին ամբիոնի վարիչի թեկնածուի (թեկնածուների) ներկայությունը, որպես կանոն, պարտադիր է: Թեկնածուի բացակայության և նրա գրավոր համաձայնության դեպքում գիտական խորհուրդն ընդունում է որոշում թեկնածությունը նիստում քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ:

21. Նախագահողը ծրագրային ելույթի համար ձայնը տալիս է ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուին (թեկնածուներին): Ելույթի առավելագույն տևողությունը որոշում է գիտական խորհուրդը:

22. Թեկնածուի ելույթից հետո գիտական խորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են նրան տալ հարցեր, որոնք սահմանափակվում են նախագահի առաջարկով՝ գիտական խորհրդի որոշմամբ:

23. Թեկնածուի (թեկնածուների) ծրագրային ելույթից հետո իրականացվում է թեկնածության քննարկումը, որին կարող են մասնակցել ինչպես գիտական խորհրդի անդամները, այնպես էլ հրավիրվածները:

24. Ելույթի տևողությունը որոշում է գիտական խորհուրդը: Անհրաժեշտության դեպքում նախագահողը, գիտական խորհրդի համաձայնությամբ, կարող է երկարացնել ելույթ ունեցողին հատկացված ժամանակը:

25. Քննարկումը դադարեցվում է գիտական խորհրդի որոշմամբ:

26. Քննարկումների ավարտից հետո թեկնածուներին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն: Ելույթի համար հատկացվող ժամանակը որոշում է գիտական խորհուրդը:

4. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

27. Քննարկումներից և լրացուցիչ ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտարարած թեկնածուի (թեկնածուների) ազգանունը, անունը, գիտական խորհրդի որոշմամբ, գրանցվում է քվեաթերթիկում:

28. Նախագահողը գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ գաղտնի քվեարկության կարգը:

29. Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար, գիտական խորհրդի որոշմամբ, խորհրդի անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս (կենտ թվով) հաշվիչ հանձնաժողով, որն իր կազմից ընտրում է նախագահ: Թեկնածուն չի կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

30. Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկում նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, «կողմ» և «դեմ» բառերը (հավելված N 1.1):

Մեկից ավելի թեկնածուների քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկում այբբենական կարգով նշվում են թեկնածուների ազգանունը, անունը, իսկ վերջին տողում՝ «բոլորին դեմ եմ» արտահայտությունը (հավելված N 1.2):

31. Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամին տրվում է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է համապատասխան ցուցակում:

32. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (հավելված N 2):

Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը կազմվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:

33. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

1) թողնված է «կողմ» կամ «դեմ» բառը (միակ թեկնածուի քվեարկության դեպքում),

2) քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում): Որևէ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում (հավելված N 1.2):

Քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր: Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը ընդունում է հաշվիչ հանձնաժողովը:

34. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին հրապարակում է քվեարկության արդյունքները, որից հետո գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

35. Ամբիոնի վարիչի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների կեսից ավելին:

36. 2 և ավելի թեկնածուների դեպքում ոչ մի թեկնածուի կողմից գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝

1) առավելագույն ձայներ ստացած առաջին 2 թեկնածուները,

2) առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և նույնաքանակ ձայներ ստացած երկրորդ և հաջորդ թեկնածուները,

3) հավասար առավելագույն ձայներ ստացած 2 և ավելի թեկնածուները:

37. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակարգին համապատասխան՝ նույն կամ գիտական խորհրդի որոշմամբ՝ նոր հաշվիչ հանձնաժողովի կողմից:

Ընտրված է համարվում գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների ձայների կեսից ավելին ստացած թեկնածուն:

38. Գիտական խորհուրդը հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հիման վրա ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ամբիոնի վարիչի ընտրվելու մասին,

2) կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,

3) ընտրությունը չկայացած ճանաչելու մասին,

4) ընտրությունն անվավեր ճանաչելու մասին:

39. Ամբիոնի վարիչի ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝

1) ամբիոնի վարիչի միակ թեկնածուն չի ստացել գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների ձայների պարզ մեծամասնությունը,

2) ամբիոնի վարիչի 2 թեկնածուներից ոչ մեկը չի ստացել գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների ձայների պարզ մեծամասնությունը,

3) կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների ձայների կեսից ավելին:

40. Ամբիոնի վարիչի ընտրությունը համարվում է անվավեր, եթե ընտրությունն անցկացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն ընթացակարգի պահանջների խախտմամբ:

41. Ամբիոնի վարիչի ընտրության գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը նիստի արձանագրության հետ ներկայացվում են համալսարանի ռեկտորին:

42. Ամբիոնի վարիչի ընտրությունն անվավեր ճանաչելու մասին գիտական խորհրդի որոշման հիման վրա ռեկտորը մեկ ամսվա ընթացքում նշանակում է նոր ընտրություններ:

5. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՐԱ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

43. Համալսարանի ռեկտորը ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում է 5 տարի ժամկետով:

44. Ամբիոնի վարիչի լիազորությունների վաղաժամ դադարեցման դեպքում ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի նոր ընտրություններ՝ սույն ընթացակարգի համաձայն:

45. Առանձնատուկ դեպքերում (նոր ստեղծվող ամբիոն, ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուի բացակայություն, ընտրության չկայացում կամ անվավեր ճանաչում) ռեկտորն իրավասու է մինչև մեկ տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել սույն ընթացակարգի 8-րդ և 9-րդ կետերում սահմանված պահանջները բավարարող անձին և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել ամբիոնի վարիչի ընտրություններ:

Հավելված N 1.1

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

գիտական խորհրդի _____ նիստում

տարեթիվը, ամսաթիվը

(արձանագրություն N ___) _____

ամբիոնի անվանումը

ամբիոնի վարիչի փակ գաղտնի քվեարկության

_____ Կողմ

թեկնածուի ազգանունը, անունը Դեմ

Թեկնածությանը կողմ լինելու դեպքում թողնվում է «Կողմ» բառը, ջնջվում՝ «Դեմ» բառը, իսկ դեմ լինելու դեպքում թողնվում է «Դեմ» բառը, ջնջվում՝ «Կողմ» բառը:

Հավելված N 1.2

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

գիտական խորհրդի _____ նիստում

տարեթիվը, ամսաթիվը

(արձանագրություն N ___) _____

ամբիոնի անվանումը

ամբիոնի վարիչի փակ գաղտնի քվեարկության

N	Թեկնածուների ազգանունը, անունը	
	Բոլորին դեմ եմ	

Որևէ թեկնածուին կողմ լինելու կամ բոլորին դեմ լինելու դեպքում քվեաթերթիկում համապատասխան տողի վանդակում կատարել նշում:

Հավելված N 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է _____

գիտական խորհրդի _____ նիստում (արձանագրություն N ___)
տարեթիվը, ամսաթիվը

հետևյալ կազմով՝

1. _____
ազգանուն, անուն
2. _____
ազգանուն, անուն
3. _____
ազգանուն, անուն
4. _____
ազգանուն, անուն
5. _____
ազգանուն, անուն

Գիտական խորհրդի _____ անդամից նիստին ներկա էր _____ անդամ:
Քվեարկվել է (են) _____
ամբիոնի անվանումը

ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածությունը (թեկնածությունները):
Քվեարկությանը մասնակցել է գիտական խորհրդի _____ անդամ:
Բաժանվել է _____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:
Քվեարկության արդյունքներն են՝

1) Միակ թեկնածուի դեպքում՝

Թեկնածուի ազգանունը, անունը	Կողմ	Դեմ	Անվավեր

2) Մեկից ավելի թեկնածուների դեպքում՝

	Թեկնածուների ազգանունը, անունը	Կողմ	Դեմ
1.			
2.			

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____ :

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝ _____ -ը
ազգանուն, անուն

ընտրված է (չի ընտրված) _____
ամբիոնի անվանումը

ամբիոնի վարիչի պաշտոնում:

Կամ՝

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝

_____ ամբիոնի վարիչի պաշտոնի
ամբիոնի անվանումը

թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ամբիոնի վարիչի պաշտոնում,

իսկ ներքոնշյալ թեկնածուները՝

1. _____
ազգանուն, անուն

2. _____
ազգանուն, անուն

3. _____
ազգանուն, անուն

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն

2. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն

3. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն

4. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն